

միասնաբար ձուլուած են, որ ամբողջ բանաստեղծութեան մէջ միայն մէկ հիմնական դադափար կ'ընթանայ, այսինքն մեռնելու հարկադրանքն, որ մարդկութեան վրայ կը ծանրանայ եւ որմէ ոչ ոք կրնայ զերծանիլ եւ հետեւաբար ըմբռնելի է կեանքի՝ անմահութեան ծարաւն, այնպէս որ նախընթացը կրնայ միայն իբր ներածութիւն ծառայել այս հիմնական դադափարին, որուն մէջ ջրհեղեղի զրոյցը պարզապէս հիւսուած է:

Ջրհեղի զրոյցի ծաղման ժամանակի նկատմամբ, որ զմեզ ամէնէն աւելի կը հետաքրքրէ, շատ դժուարին է վերջնական ստուգութեամբ խօսիլը: Մեզի հասած բնագիրն Աստուրբանիպաղի (իբր 650ին ն. Ք.) մատենադարանէն է, որ ապահովաբար բարելական սկզբնաղբը մ'իրեն հիմ ունի: Շուրիպպակ քաղաքին կործանումը (իբր 3400ին ն. Ք.) կու տայ մեզի terminus a quoն: Ջրոյցին համաձայն այս քաղաքն Եփրատին եզերքը շինուած եւ գետին ողողումով կործանած է: Սակայն գերմանական Արեւելեան Ընկերութեան պեղումներն, որոնցմով Ուտ-նապիշտիմի ծննդավայրը՝ Փարա բլուրին ներքին երեւան եկաւ<sup>285</sup>, ցուցուցին, թէ ասիկա ոչ թէ Եփրատի ողողումով այլ հրդեհով աւեր աւերակ եղած է, ինչպէս մօտիկ բարձր խաւէն կը տեսնուի: Բայց որովհետեւ Համուրաբի ժամանակէն՝ իբր ն. Ք. 2100էն ի վեր Շուրիպպակ անունը բարելական պատմութեանէն բոլորովին անհետացած է<sup>286</sup>, եւ քանի ոչ Ասորես-

տանցոց գլխաւոր ստուածն Աշուր եւ ոչ ալ Բարելացոց Մարդուկը կը յիշուին, ներելի է մեծ հաւանականութեամբ ենթադրել թէ Գիլգամէշ-գիւցարներգութեան մէջ զրոնուող ջրհեղեղի զրոյցին խմբագրութիւնն իր նկարագրական ձեւը Համուրաբի ժամանակէն յառաջ ստացած ըլլալու է, հետեւաբար ն. Ք. 2100 տարին terminus post quem կը կազմէ<sup>287</sup>:

Ս. Գրքի ջրհեղեղի պատմութեան ժամանակին համար նկարագրական է որ տապանակն իբր «արկղ» մը կամ «սնտուկ» մը կը ներկայացուի, մինչ մեզի հասած բարելական բոլոր ջրհեղեղի զրոյցները «նաւու» մը մասին կը խօսին: Ասոր համար նոյն իսկ Գրէսման կ'ընդունի՝ թէ «արկղի այս պատկերացմամբ... իւրայեւան ըմբռնումն իրօք շատ հիմ աւանդ մը պահած է<sup>288</sup>, որովհետեւ ըմբռնելի է թէ 'արկղը, յետապային 'նաւով, մը փոխանակուած ըլլայ, մինչ հակառակ զարգացումը հաւանական է<sup>289</sup>»: Այս եզրակացութիւնը կը կարծեմ թէ ներելալ է նաեւ տապանակերան ի նպատակ արժեքնել: Որովհետեւ նոյն իսկ Գրէսմանի տեսակէտին համաձայն չկայ հոս ոչ մէկ պատճառ անդրադոյն բարեփոխութեան. վասն զի չկայ հոս «բարոյական շարժառիթի» մը հարցը, այսինքն «բարոյականութեան» կամ «միաստուածեան» աշխարհայեցողութեան հակառակ եղող «վտանգաւոր» բան մը «հեռացնել» ուղիւր: Հետեւաբար սրբազան մատենագիրը պահած է նաեւ տապանակերան սկզբնական հին գաղափարն եւ միայն — որպէս զի հաւանաբար ինք զինքը հասկանալի ընէ — կոչած է զայն երկրին բնակիչներուն անունով: Նոյնը կարելի է ըսել նաեւ Բերոսոսի պատմութեան մասին<sup>290</sup>, որուն համաձայն տապանակը Հայաստանի Կորդուաց լեռներէն մին է: Վասն զի իր ժամանակի ըմբռնումով Գործաձի ծրղ անունը կը ներփակէր նաեւ հայկական Տաւրոս-Մասիոսն, ինչպէս արդէն վերը տեսանք<sup>291</sup>:

<sup>285</sup> Հմմտ. MDOG (=Mitteil. der Deutschen Orient-Gesellschaft, zu Berlin), Nr. 15—17 (նոյ. 1902—1903):  
<sup>286</sup> Պէտք է միտ դնել, որ Բերոսոս Շուրիպպակ անունը հաւանաբար, այնպէս կը թուի թէ անոր ջրհեղեղի հերոսը Σιόστρα = «Սիպարացոց քաղաքին» (Բրոն. Ա., էջ 36 յջ.) կը բնակի, որովհետեւ հոս է որ նա իբր գրութիւնները կը թողէ: Ըստ այսմ Սիպար կամ Սիպար պէտք է բոլորովին կորսուած Շուրիպպակի իբր յետագայ փոխանակութիւն մը համարել: Թէ ինչո՞ւ համար ձեռք ալ Սիպարը գործածուած է, կարելի չէ որոշ ըսել: Նաեւ Սիպար, ինչպէս Շուրիպպակ, Եփրատի եզերքը կը գտնուէր եւ հաւանաբար, ինչպէս վերջինս, որ հրդեհի աւերածէն ետքը զէթ իբր փոքր քաղաք մը վերաշինուեցաւ, էլ ժամացիներէն կործանեցաւ, սակայն կրկին ծաղկեցաւ ու նոր պայծառութեան հասաւ: Գուցէ Նարնիդի կողմէն էրարբարացի արեւու մեհեանին քով կատարուած պեղումներն, որոնք շինութեանց նոր վաւերագրեր երեւան բերին, զրոյցին վրայ ազդած եւ կաւէ տախտակները թաղելու շարժառիթը տուած են. Հմմտ. GreBmann, անդ, էջ 191, ծնթ. 3: Lehmann-Haupt (Armenien), II, 2, Յաւելուածք, էջ 45\*) կը համարի Բերոսոսի աղբիւրը համեմատութեամբ Գիլգամէշ-գիւցարներգութեան «փոփոխուած եւ այն կրօնագէտն եւ բարոյագէտն աւելի զարգացած տեսութիւններ յայտնող» խմբագրութիւն մը (Հմմտ. եւ իբր Neue Studien zu Berossos in Klio XXII, Պրակ 1/2, 1928):  
<sup>287</sup> Հմմտ. GreBmann, անդ, էջ 191 եւ 209:  
<sup>288</sup> Ընդգծումը մեզմէ է:  
<sup>289</sup> Անդ, էջ 220:  
<sup>290</sup> Պատմութեան նախնական բնագրի հնութեան համար ներելալ է զուցէ նկատի առնել Քսիսութրոս անունն, այսինքն՝ խսիս-արբու, որ է արբա-խսաւիս = «չառ խելացի» բառին շրջամբ. այս Ուտ-նապիշտիմի վերագրիւններէն մին էր. տ. Gilgamesch-Epos, տախտ. ժԱ., տող 196 (էջ 59): Արձանագրութեանց բնագրիւններէն ունեցած ասոր շեղումներն մասին տ. GreBmann, անդ, էջ 213 յջ.  
<sup>291</sup> Ուրիշ կերպ GreBmann, անդ, էջ 215:

**ՀԻՆ ՀՈՍՏՈՍՆԻ ԱՐԵՒՄՏԵՆ ՍՈՒՄԵՆԸ ՓՈՔՐ-ՀՈՑԵ ԵՒ ԿՈՂՈՓԵՆԷ (ՍԵՐՍՏԻՆ)**

ԳՐԵՑ Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

(Շարունակութիւն):

Հետեւաբար կարծեմ իրաւացի է Նիծիր լեռը հոս փնտռելն եւ զայն Մաշու սահմանալեռան, այսինքն Տաւրոս-Մասիոսի հետ նոյնացնելը. իսկ ենթադրութեանս հիմը կը կարծեմ տեսնել նաեւ գիւցարներգութեան բնագրին մէջ: Երբ նաւը Նիծիր լեռան վրայ կը դադարի, «էա աստուածը նաւ կը մտնէ, կը բռնէ Ուտ-նապիշտիմի ձեռքէն եւ ցամաք կը հանէ<sup>292</sup>», այսինքն երանելիներու երկիրը: Այսպէս նա կեցած էր սահմանալեռան վրայ եւ չէր կրնար ու ներելալ ալ չէր առանց աստուծոյ մը միջնորդութեան երանելիներու աշխարհը մտնել. եւ այս շատ իրաւացի էր: Զի եթէ «երկերորդական-աստուածը» Գիլգամէշ չէր կրնար այս բանն ընել<sup>293</sup>, որչափ եւս առաւել պարզ մարդ մը, որչափ ալ «բարեպաշտ» եւ «չափազանց խելացի» եղած ըլլար:

Մինչեւ հիմայ ըսուածներէն ակնյայտնի կը տեսնենք՝ թէ ինչպէս հասկնալու է Ծն. Ը, 4 «Արարատ»ն եւ ուր փնտռուել է զայն, միայն հայկական Տաւրոսի լեռնաշղթային մէջ: Ուրիշ կերպ պէտք է դասել սակայն «Արարատ»ը միւս տեղիքներուն մէջ, ինչպէս Նս. Լէ, 38 (Գ. Թաղ. ԺԹ, 37) եւ Նր. ԾԱ, 27, որոնք նմանապէս Ուրարտու երկրին կը հային: Բայց որովհետեւ ասոնք յետագայ եւ տարբեր ժամանակներուն գրուած են, պէտք է միշտ նոյն ժամանակուան Ուրարտուի քաղաքական-աշխարհագրական սահմանը նկատի առնել, որ անտարակոյս աշխարհագրական ընդարձակման եւ անձկացման ենթարկուեցաւ սոտեյ, ինչպէս յաջորդ հատուածէն կը տեսնուի:

(Շարունակութիւն): Հ. Վ. ԻՆԳՎԻՋԵԱՆ

Ինչո՞ւ գծեցինք այս պատկերները: Պարզապէս անոր համար որ կանխաւ պատասխանած ըլլանք այն ստորագրութեան թէ Ուրարտու-Հայաստան աւելի նորագոյն է քան նախընթացները, եւ ապագայ Գամիքը կանխադոյն իսկ «Հայաստան» կրնայ ըսուել, հետեւաբար նկատի առնուելու են ասոնք ալ, եւ քաղաքական դիպուածի արդիւնք նկատուելու ենք այս կամ այն կողման (— մեր խնդրոյ մէջ՝ Կողոփենէ գաւառի) Ուրարտու-Հայաստանի յետոյ վերաբերելը կամ ոչ: Մեր համարում ուրուարդները կը յուսանք լուսարանեցին այս կէտերն ալ, որչափ մեզի այստեղ պէտք է, եւ մենք նոյն իսկ նպատակաւորապէս տեսութիւնքն ակնարկեցինք, առանց շատ ծանրանալու խնդրոյ ուրիշ կնիքներուն վրայ ալ: Հնագոյն «Հայաստաններ» — լուսագոյն էր Նախահայաստաններ — եղած են բնականաբար, անգամ մ'որ կ'ընդունինք թէ հայ տարերք՝ երկար շրջան մ'ըրած են Փոքր Ասիոյ մէջ: Թողլով եւրոպական հայրենիքի խնդիրները, նոյն իսկ փոխզական շրջանին բաւական սերտ եղած պիտի ըլլան Հայոց յարաբերութիւնքն, այնպէս որ հին հեղինակները մինչեւ անգամ Փոխզացոց մէկ ձեռքը կը համարին (Հերոդ.), համարելու (Գիոնեսիոս), կամ գոնէ լեզուաւ շատ նման (Եւդոքսիոս) եւ նոր գիտնականք կը դրողին Փոխզացացոց բնակավայրերու եւն զննութեամբ, գտնելով հոն նոյն իսկ «ասքանազեան աղբին» (Կորիւն) նախահայրենիքը՝ Ապկանիա (Ապկանեան լիճը). — թողլով այժմ մէկզի շատ աւելի մօտիկ արեւելեան «Ասքանազը» (Աշուզան), որ Մաննացոց եւ Ուրարտեանց հետ տակաւին Բարելոնի վրայ կը հրաւիրուի իբր Կիւրոսի դաշնակից (Երեմ. ԺԱ., 27), ինչպէս թողուցինք բոլոր այն կէտերն ու փաստերը՝ որոնք արեւելից կը վերաբերին: Արդէն նաեւ «Արմէն» տեսութեան ալ անօրինակ կայանը՝ Որմինիոս լեռն ապագայ Բիւթանիոյ՝ փոխզական շրջանին կը վերաբերի: Ուստի աւելի կանխադոյն Նախահայաստան մ'ալ կ'ունենանք: Սակայն այս ամէնէն նաեւ ապագայ ժամանակաց համար հետեւութիւններ հանել գոնէ տարապայման կ'ըլլար, ըսել է՝ ուղղակի Պրոպանտիսէ

<sup>292</sup> Հմմտ. տախտ. ԺԱ., տող 114 եւ 198—199:  
<sup>293</sup> Հմմտ. տախտ. Թ. եւ Ժ.:

մինչև Կասպից ծով Հայաստան մը տեսնել, որ միայն քաղաքական բերամբք հետզհետե տեղափոխուած է: Իրերն այսպէս պարզ չեն, եւ այս ամէն շրջաններուն կարեւորագոյն դերը կատարած է խնդրոյն ազգազրականը: Եւ գոնէ է. եւ յաջորդ դարերը ամբողջ Փոքր Ասիան ալ հիմնովին փոխած են ոչ միայն քաղաքականորէն՝ այլ նաեւ ազգազրոյն: Քաղաքականորէն Ուրարտու մինչև իսկ կարծես անփոփոխ է բաւական ժամանակ ալ, եւ գոնէ մինչև 585 (կամ նաեւ 580) անընդհատ կը գտնենք արքայից շարքն եւ արձանագրութիւնքն, թէ եւ աշխարհակալութիւնք կը զազրին եւ պէտք է որ զազրին: Ոչ միայն Ուրարտու, այլ նոյն իսկ Նինուէ աւելի պաշտպանողականի ստիպուած էր Կիմմերական-Սիլիթական արշաւանքներէն ի վեր: Արեւելք նոր կերպարանք կ'անու եւ Մարք են որ տիեզերակալութեան կը ձեռնարկեն, որուն հիմ կը դնէ արդէն Փրաւորդ: Թէ եւ Նինուէի դէմ իւր փորձը չի յաջողիր, բայց արդէն Կիաքսար վճռական հարուածը կու տայ Նինուէի կործանմամբ (607 ին). եւ Մարական դերը խանութեան ինչպէս երբեմն Ասորեստանեայց տիեզերակալութեան դէմ դարաւոր մրցակից չէին կրնար ելլել այնուհետեւ ո'չ Ուրարտու եւ ո'չ Հատեանք, որոնք շուտով նուաճուեցան, այլ միայն Լիւդիա, որ փոքրասիական աւազապետութեան փորձն բրաւ ժամանակ մը: Հոն ալ է. դարուն յեղափոխութիւն կատարուած էր, եւ փոխզական Հերակղեանց հարստութեան տեղ անցած էր բնիկ լիւդական Մերմատաց հարստութիւնը: Հոս ալ տակնուվրայ բրած էին Կիմմերացիք (670 եւն) եւ առած նաեւ մայրաքաղաքը՝ Սարգէս: Բայց Աղիատտէս կրցաւ վերջնապէս փտարել այս արշաւանքը, եւ Կիմմերացուց եւ ընկերակցաց այս յետ մղունն էր որ վերջնական շարժում յառաջ բերաւ՝ Աղիւսէն անդին՝ դէպ ի Ուրարտու մղելով նախահայ տարերքն: Լիւդական եւ մարական գորութիւնք մրցութեան ելան փորուն Ասիոյ անբախտութեան եւ Աղիատտէս († 570) եւ Կիաքսարայ († 584) մղած երկարամեայ պատերազմին վերջն եղաւ Աղիւս գետի մօտ ճակատամարտը (585 ին), որով Լիւդացիք եւ Մարք բաժնեցին Փոքր Ասիան, Աղիւսէն արեւելք՝ Մարաց, արեւմուտք՝ Լիւդացուց իշխանութեան ներքեւ: Գրեթէ կէս դար տեւեց այս վիճակը: Բայց երբ Կրիստոս-զաշնակցած Բաբելոնի հետ — անցաւ Աղիւսը

եւ դրաւեց Սպիտակ Ասորիք (= Գամիրք՝ Հերոդ., Ա., 72, եւ նաեւ յետոյ յաճախ, իսկ վերջինք՝ նաեւ Փոքր Հայոց բաժինն այսպէս կ'անուանեն երբեմն —) հզօրազոյն հակառակորդ մ'ունեցաւ: Կիւրոս՝ որով Մարաց գերիշխանութիւնն անցած էր Պարսից (550 ին) քիչ ժամանակի մէջ մերժեց զԿրիստոս ո'չ միայն Կասպազովկիայէն, այլ անցնելով Աղիւսը՝ ջախջախեց Լիւդացուց գորութիւնը: Կրիստոս գերի բռնուեցաւ, եւ առնուեցաւ Մարգեաց քաղաքը, եւ Լիւդիոյ հետ ամբողջ արեւմտեան Փոքր Ասիա եղաւ պարսկական նահանգ (546 ին): Բաբելոնի ալ առմամբ (538 ին)՝ հիմնուած էր պարսկական տիեզերակալութիւնը: Եւ երբ թէ՛ Մարաց եւ թէ՛ Կիւրոսի առեն՝ աղային վարչութիւնք եւ մանր պետութիւնք կը մնային, Աքամենեան Դարեհի օրով (521—485) վերածուեցաւ այն հակայածաւ պետութիւնը սատրապութեանց: Եւ Դարեհի երեք լեզուեան արձանագրութեանց մէջ է որ հին «Ուրարտու» անուան դէմ (Բաբելականին մէջ՝ «Ուրաշտու») կը հակադէմնոր անունը «Արմանիա»: Երկար երեքլեզուեան մ'ալ կանգնած է Դարեհ «Արմինայացուց» (եւ Մարաց) ապստամբութեան եւ իւր մղած պատերազմաց՝ Արմինա-Հայերը նուաճելու առթիւ եւ իւր զօրավարաց մին է «Արմինացի» մը Դատարընը (վեց ճակատամարտեր 520 եւ 519 տարիները Զուզա, Տիլրա, Ուկիամա՝ Արմանիայի մէջ, Իդիտու՝ Ասորեստանի մէջ, եւ վերջինը՝ Աւաիցարա՝ դարձեալ Արմանիոյի մէջ): Հետաքրքրական է որ երեքլեզուեան մ'ալ կը պատմէ ուրիշ արմինացուց մը ձեռնարկը՝ Բաբելոնի մէջ թագաւորելու իրեն Նարունիտայ որդի «ստել»ով (514 ին 1512). եւ այս անձն է «Արախա անուն արմինացի՝ Հալդիտայի որդի»: ուստի Սալդի մը՝ թերեւս Ուրարտեանց արքունի տնէն իսկ, բայց արդէն «արմինացի», — պարսկացի մը՝ որ շատ լաւ կը բացատրէ Արմանիցա-Ուրարտուի ազգազրական վիճակն այս դարերուն: Արախա ալ պատկերացուած է միւս թագաւորաց հետ, որոնց յաղթեց Դարեհ:

Քաղաքական այս յեղափոխութեանց հետ համընթաց եղած է ազգազրական յեղաշրջումը. բովանդակ Փոքուն Ասիոյ մէջ: Ամբողջ ազգեր տեղափոխուած են, ուրիշներ յառաջ եկած, բնիկ տարերք՝ որոնք երեւան կ'ելլեն կամ կրկին կը ձուլուին նորեկ ազ-

գաց հետ: Երբ Սարգսն եւ յաջորդք ընդհանրապէս նշանակելու համար այս երկիրները կը գրէին՝ «Մուսա, Ուրարտու, Կասկու, Թորէլ եւ Մոսոք». եւ դարձեալ «Սիլիակու (Կիլիկիա) եւ «Սատէ», քիչ մ'ետքն — եթէ չզաղրէին ալ սատրեստանեան արքունի արձանագրութիւնք, — պիտի չկարենային նոյնպէս գրել: Ո'չ Թորէլ (Տիւրարենացիք) մնացած էին հոն, ոչ Մոսոք (Մոսք), ո'չ «Սատէ» կար կամ Հատեանց իշխանութիւնքն, եւ ո'չ «Ուրարտու» մնացած էր նոյնպէս: Հոս մտնող հայ տարերքն ալ նոր ձուլման պէտք էր որ ենթարկուէին: Որչափ ալ չափազանցուած են թաղերնք այն կարծիքը թէ՛ Հայք ուղղակի հին Ուրարտեանք են՝ որ նորեկներուն յեղուն ու նկարագրին առին (Հոմմէլ եւ այլք), յամենայն դէպս ճիշդ է թէ Ուրարտեան տարերք կարեւորագոյն մաս մը կազմեցին Հայոց, եւ Հայաստանի տեղազրակայն անուանց ստուար մաս մը մնացորդ է ուրարտեան ժամանակէ: Նշանակալից է որ Ալարտեանց աշխարհը, ուր՝ նաեւ Դարեհի օրով քաշուած էին Ուրարտեանք, քիչ ետքը Հայաստանի սիրտն եղաւ եւ մնաց (Ալարատ): Թողով բոլոր ուրիշ յարակից խնդիրները՝ կը բաւէ ճշդել թէ նախ պատմական ժամանակի Հայաստանը կազմուեցաւ Ուրարտուի սահմաններուն մէջ, քիչ մ'աւելի ընդարձակուած յետագայ ժամանակները. երկրորդ՝ այն ժամանակ երբ Հայք Եփրատէն ասդին Հայաստանը կը կազմէին, որ միայն հետզհետէ յաջողեցաւ, անդին՝ Գամիրք էին որ կը կազմէին իրենց նոր հայրենիքը՝ նոյն ճամբով, եւ հիւսիսակողմը կը պատրաստուէր ապագայ Պոնտոսը: Այս երկիրներուն ալ կազմութեան մէջ մտան նախահայ տարերքն որ հոն մնացած էին եւ յատկապէս այն ժողովրդական մեծ նախնական խաւը, զոր տարածուած կը գտնեն մարգախօսք բովանդակ Յատաջակողման Ասիոյ մէջ: Եւ անոր համար դարմանալի չէ որ մարգախօսք (Շանոր, Լուշան եւն) արդի Գամրաց մէջ իսկ, որչափ ալ թուրք, յոյն եւն ըլլան, ամենամեծ մասամբ կը գտնեն հայ տարերք եւ նախակապաղովկեան կամ հատեան ազգաց մնացորդներ, իսկ արդի Հայոց տիպարն ալ կապէս նոյն հատեանին հետ: Եւ բնական էր այս, քանի որ հին Կատպատուկն ու Կատաունեան եղան Գամրաց բուն հայրենիքը, եւ միւս կողմանէ հատեան տոհմեր արդէն

կանխաւ տարածուած էին Եփրատէն անդին ալ, եւ Ուրարտեանք հատեաններէն առին օրինակի համար Ծոպանին (= Ծոպի Ծահէի) արդէն Մենուայ եւ Արգիստիսի օրով: Թողունք նաեւ Ուրարտեանց ազգազրական խնդիրները, քանի որ իրեւ պետութիւն հետզհետէ մեծցաւ եւ կ'ամփոփէր բազմապիսի ազգեր կամ տարրներ: Իսկ այն խնդիրը թէ նաեւ Ուրարտու նախնական խաւը նոյն էր Հատեանց երկիրներու եւ առհասարակ Փոքուն Ասիոյ մէջ նախնական ժողովրդեան հետ, հոս մեր ծրարքէն դուրս է: Բայց այս ակնարկէն ալ կը տեսնուի թէ ինչպէս կ'ըլլայ որ մարգախօսք Հայոց տիպարը լաւագոյն ներկայացուցիչ կը գտնեն այս կանխազոյն խաւերուն, զոր նաեւ պարզ «հայակերպ» կը յորջորջեն տմանք, այլք՝ ալարտեան, կամ նաեւ այլազգ՝ ըստ պէսպէս տեսութեանց: Եւ միւս կողմանէ կը տեսնուի դարձեալ թէ ինչո՞ւ յետագայ Փոքր-Հայք հնութեան երկար շրջանին մէջ եղական դերք մ'ունէր եւ չկրցաւ ո'չ լիովին հայանալ կանուխէն եւ ո'չ լիովին դամբանալ, որչափ ալ քաղաքական հանգամանքները նպաստաւոր եղան Գամրաց՝ Մելիտոնէի շրջանին համար շատ կանուխէն, հիւսիսային բաժնին համար գոնէ Ա. դարէն (Յ. Ք.): Գամիրք չէին կրնար գլուխ հանել վերջնականապէս, քանի որ իրենք իսկ չուտով փտանդի ենթարկուեցան յունանալու, իսկ Պոնտոս քաղաքական միութիւն մ'չը պէսպէս ազգաց, եւ չունէր ազգազրական միատարրութիւն, եւ նոյն փտանդը կար հոն ալ՝ հոմմէական շրջանին: Հայ տարրը՝ միշտ նպաստ գտած Մեծաց նորանոր գաղթականութիւնք, կրցաւ ինքը զինքը հոն պահել՝ նաեւ աննպաստ պարագաներու մէջ. եւ օրինակի համար՝ երբ Կողովենէ (Աւրատեան շրջան) կանուխէն իսկ կապէս պոնտական էր, թէ եւ ո'չ լիովին զուրկ հայութենէ, անոր կից արեւելակողմը (Նիկոպոլիս-Սատաղ) հայ մնացած էր նաեւ պոնտական-հոմմէական շրջանին: Փոքր Հայոց հայութեան հզօրացումը կապ ունի «Հին Հայաստանի» բաժանման հետ, երբ Բարձր Հայոց՝ իսկ Ծոպի՝ յունական բաժին եղաւ, աւելի եւս ապագային թէ՛ Բիւզանդեանց յատաջախազացութեան եւ թէ Հայոց այն շրջանին գրաւած մեծ դերին հետ. իսկ մեծագոյն կազդուում բերաւ Արժրունեաց գաղթականութիւնը:

Չարմանալի չէ Փոքր Հայոց ազգագրական եւ հետեւաբար նաեւ քաղաքական տկար դարձացումն, երբ նոյն իսկ բուն «Հին Հայաստան» աննպաստ պարագայից մէջ միայն կրցաւ հեռագրեալ եւ դանդաղ դարձանալ. որովհետեւ ի սկզբանէ իսկ դարաւոր գերիշխանութեան եւ նաեւ տիրապետութեան տակ միայն կրնար դարձանալ տեղի ունենալ, աւելի լուրջայն, եւ այն՝ միշտ երկու գլխաւոր բաժնով: Կրկին Հայաստաններ եղած են՝ Դարեհի օրերէն սկսեալ մինչեւ Տիգրան Մեծ, մասամբ նաեւ այնուհետեւ շարունակուած՝ այս կամ այն ձեւով, չհաշուելով Փոքր Հայքն եւ ուրիշ մանր միութիւնները ներքնաշխարհացս մէջ եւ սահմանաց վրայ: Որչափ ալ Դարեհ իւր արձանագրութեանց մէջ իւր «Ամանիցան» հաւատար կը դնէ Ուրարտուի, եւ որչափ նահանգաց կամ աշխարհաց ցանկին մէջ միշտ իւր միութիւն կը յիշուի «Արմանիցա»՝ ինչպէս՝ անոր հետ կից յիշուող՝ Կապպադովկիա. բայց ներքին բաժանմունք կամ հարկարձեւեալ եւ յետոյ սատրապութիւնք երկու տարրեր չըջանակներ կը ցուցնեն կամ քիչ ետք ցուցուցին: Այս բաժանմանց սահմանք բնականապէս անփոփոխ չէին կրնար մնալ Արամիւնեանց ալ ժամանակ, թո՛ղ թէ յետոյ, յընթացս այնչափ դարերու: Սահմանագծերը յաճախ անորոշ են, եւ յիշուած ազգերն ալ տեղափոխուած են կամ ամփոփուած յընթացս ժամանակի: Անորոշ սահմանագծով է այսպէս Հիւսիս-արեւելեան այն չըջանալ (Հերոդ. Գ., 94), զոր կը կազմէին Մասիսիացիք (Ստրապոնականի), Ալարտեանք (Ալարտարացիք) եւ Սասպիացիք (ապազայ Սպերացիք, որոնք սակայն ըստ Հերոդ. Ա., 104. Գ., 37 Կողքիացուց եւ Մարաց մէջ կը բնակէին): Եթէ ճիշդ է զիտնոց կարծիքը թէ Ալարտեանք հին Ուրարտացիք են (կամ մէկ գլխաւոր տոհմը), որոնք Հայոց մտնելն ետքը քաշուած ամփոփուած էին Երասխայ հովիտը (Ալման եւ այլք). այս բաժնին մէջ հայութիւնն աննշան պիտի ըլլար: Չարմանալի է որ իբր դար մեծքը Ալարտեանք անհետ եղած են, եւ հոն ալ արդէն Հայաստան է՝ Քսենոփոնեան Բիւրուն ատեն: Անշուշտ ճիշդ է այն զիտողութիւնը թէ Քսենոփոնի «Կիւրախրատ» գրոց նկարագրութիւնը ճշգրիտ կը ներկայացնէ Հայոց եւ Քաղզէացուց (= Սպարտաց, ուրեմն Ուրարտեան ուրիշ գլխաւոր տարրի մը, հմմտ.

«Սպարտաց» Ուրարտեանց), որչափ ալ վիպական ըլլայ դրբին նպատակը: Ըստ այնմ Հայք եւ Քաղզէացիք անբնդհատ կուսուց մէջ էին. Հայք բունած էին դաշտերը, եւ չէները, Քաղզէացիք լեռներն ու արօտները: Կիւրոսի աղբեցութեամբ դաշտնք կոեցաւ՝ այնուհետեւ համերաշխ կենակցելու, ամուսնութիւններ կնքելու, իրարու օգնելու եւն: Բայց արդ այն Սաղարք՝ որ ըստ այսմ դէպ ի հիւսիս մղուեցան՝ դարերով յամառութեամբ պահած են Հայաստանի ամբողջ հիւսիսակողմը, մինչեւ ամփոփուած են «Փոքր Հայոց» հիւսիսային կողմն՝ եւ Պարսարի մէջ: Չիարդ եւ իցէ. այն ԺԸ. չըջանակէն արեւմուտք էր Դարեհի տրոց ԺԳ. չըջանալ, որ ուրեմն Դարեհի «Արմենիաց» էր: Հերոտոզոս այս չըջանալ շատ ընդարձակ կը նկարագրէ (Գ., 93. հմմտ. Ե., 49—52), որովհետեւ դէպ ի հարաւ կը հասնի մինչեւ Տիգրիս, արեւմուտք՝ մինչեւ Եփրատ, իսկ դէպ ի հիւսիս՝ մինչեւ Սեւ Մով, եւ այս պոնտական բաժնին մէջ կը պարունակուէր նաեւ հնոց «Փոքր Ասիան»՝ ցորչափ չէր Կիւրիկեան, ուստի նաեւ Եփրատայ վերնարագիւն արեւմտակողմը: Ասով իրօք Աղիւս գետ կը բղխէր Արմենեան լեռնէն եւ կը հոսէր Կիւրիկիայէ (Ա., 72), ինչպէս յիշեցինք: Հարկաւոր յիշուի մ'այս ընդարձակութիւնը Չարմանալի չէ. եւ օրինակի համար Գ. չըջանակը (Գամիւրք) կը կազմէին նախնարար Սպարտակ Ասորիք, Մատիենացիք (ի Կապպադովկիա). Փոնիկացիք, Մարիանդեանացիք եւ Բիւթանացիք: Յետոյ բաժնուեցաւ մանր բաժնիներու եւ Կապպադովկիա, յետոյ Հիւրիկէ (Իրիս) մինչեւ Տաւրոս էր եւն: Հոս ալ նոյնպէս էր: Եւ արդէն այս «Հայաստանի» հարաւակողմը բունած էին Պակտիացիք, միջինը՝ Հայք, ամբողջ հիւսիսը՝ պոնտականք՝ Սաղարք, Սաղարք եւն: Մինչեւ անգամ ըստ նոյն Հերոտոտի (Ե., 49, 52) Հայաստան էր միայն Կիւրիկիոյ (Եփրատով բաժնուած) եւ Մատիենացուց աշխարհին միջեւ, ուրեմն Հայաստանի միայն Հարաւակողմը. իսկ երբ կ'ըսէ թէ Եփրատէն անդին (Մելիտինէէ) միայն 56½ փարսախ կը տարածուէր՝ կը հասկըցուի միայն վերին Տիգրիսի վրայ եղածը մինչեւ Կորդուք: Լաւագոյն պարագային՝ այս ժամանակ Հայք կրնային բունած ըլլալ չըջանալ մը, զոր կը կազմէին Եփրատ, վերին Տիգրիս, Վանայ լիճ եւ Եփրատայ վերնարագուկը (Սեւ-ջուր).

այս սահմաններն ո՛չ ամէն կողմ իսկ հասնելով: Իսկ թէ ապագայ Փոքր Հայք, նաեւ անձկագոյն մտօք մասը, թո՛ղ թէ Աղիւսի հովիտները, այս ժամանակ հո՞ծ հայութիւն մ'ըլլայ՝ լիովին անհաւանական է: Թերեւս կային նախահայ տարերք, եւ սկսած էին ապագայ դամբական եւ պոնտահայ խառնուրդները: Ապագայ Հայաստանի աւելի մերձաւոր վիճակ մը կը ներկայացնէ Քսենոփոն իւր «Արշաւանաց» գրոց մէջ, նկարագրելով իւր Բիւրուն չուն՝ Հայաստանի հարաւ-արեւելքէն մինչեւ Տրապիզոն: Այս չուն մասին (401/400ին) զիտնական մեծ գրականութիւն կայ արդէն, եւ յաճախ անմիաբան են զիտունք՝ յիշուած տեղերու նոյնացման խնդրոց մէջ: Չիարդ եւ իցէ՝ Հայաստանի սահմանն էր հարաւ-արեւելք Կենտրիտէս գետը (Գ., 3, 1 = Բոհատանու), անկէ վար՝ անկախ Կորդուք էին, մինչ անկէ վեր Հայք հպատակ էին Արտաշէս Բ. Ուշեղի (404—358): Կուսակալ էր այս սատրապութեան — Արեւելեան Հայք — Որոնտաս, որ արքային փեսան էր, — որդի Արտասուրայ, այր Հոտտոզունէ գտներ Արտաշիս Ուշեղի, — ինչպէս գարեր ետքը՝ իւր նախահարց կարգին մէջ — կ'արձանագրէ Անտիոքոս Ա. Կոմագենեայ (տես՝ Հուման եւ Բուխչոյայն, «Փոքր Ասիա», Բերլ. 1890). Ի սերնդոց Վիդաոնեայ՝ որ Դարեհի եօթն մտերիմներէն էր: Նոյն սերունդը՝ յաջորդական իշխող Հայոց՝ կը հասնէր միջեւ վերջին Որոնտէսը՝ Անտիոքոսի Մեծի (223—187) օրերը Ստրաբ. ԺԱ., 531): Կը յիշուին ուրիշ Որոնտէսներ ալ յընթացս պատմութեան, ինչպէս Աղեքսանդրի Մեծի օրով (Գաւգամելայի ճակատամարտին մէջ [331ին])՝ Հայոց զօրավար էին Միթրաւատէս եւ Որոնտէս Արիանոս, Արշ. Գ., 3, 5). նոյնպէս յետոյ Արեւելեան Հայք ուրեմն կարեւորագոյն զիրք մ'առած էին եւ պահեցին մինչեւ վերջը: Որոնտէսի բանակները կը կազմէին Հայք եւ Մարգացիք (Մարգաստան՝ Վանայ լճին արեւելակողմը) եւ Սաղարք վարձկանք: Երբ Բիւրը կը հասնի Տեղերոս գետը (= Մեղրաղեա՝ Մշոյ), բազմաբնակ աշխարհ մը (Տարոն), կ'անցնի Արաձանին, եւ կը զբտնուէր Արեւմտեան Հայաստանի մէջ, որուն սատրապն էր Տրիբազ, եւ վերջապէս կը հասնի Փասիս գետը (= Բասենոյ ջուրը Մուրց): Բասենացիք եւ նաեւ Սպերացիք ալ (այնն ատեն տակաւին Բասենացուց արեւ-

ելակողմը) Տրիբազի սատրապութեան ներքեւ էին (Է., 8, 25): Բայց ընդհանրապէս Փասիսէն քիչ անդին արդէն Սաղարք երկիրն էր (Գ., 5, 34): Եւ Տայք (որ ուրեմն տակաւին շատ տարածուած, Ուրարտեանց ատեն՝ ա՛լ աւելի, ըստ արձանագրութեանց) եւ Սաղարքացիք (ցեղակիցք)՝ Փասիսէն քիչ անդին կը զիմադրէին, թէ եւ սիրով վարձկան ալ կ'ըլլային Տրիբազի: Յոյնք կը մտնեն Տայոց երկիրը, ապա կու գան Սաղարքաց երկիրը, եւ Հարպատոս (վերին ճորո՞թն) գետն անցնելէն ետքը՝ կը մտնեն Սիւրիսեանցուց երկիրը (իւր Բարբելէն ետքը՝ լեռնակողմանքը) եւ գետ մ'անցնելէն ետքը՝ Մակրոնաց երկիրը (մինչեւ Զիգանա) եւ յետոյ Կորդեաց երկրէն՝ Տրապիզոն (Արշ. Գ., 4—5): Սաղարք եւ առհասարակ այն հիւսիսական-պոնտականք՝ Կորդուց պէս՝ ապստամբ եւ անկախ էին (Արշ. Ե., Ե. հմմտ. Գ., 4, եւ այլուր): Արեւելեան Հայաստան ուրեմն Կենտրիտեան կը հասնէր մինչեւ Երասխայ հովիտները (թէ Սիւրիսն ալ մէջն էր՝ անորոշ է): Իսկ Արեւմտեանը՝ հարաւային (անորոշ) սահմաններէն մինչեւ Արաձանիէն անդին, մէջն ըլլալով Բասան եւ Սպերացուց այն ատենուան երկիրը (Բասեն-ջուրի եւ Երասխի վերին բազկաց վրայ): Յաջորդ երկար դարերուն այս վարչական բաժանմունք նոյն չէին կրնար մնալ: Բուն Հայաստան եղած էր Արեւելեանը՝ որ Որոնտեան (Երուանդեան) ժառանգական սատրապութիւնն ալ ունէր, Արամեան գլխաւոր սատրապութեանց պէս, սկսելով Որոնտասէ:

Արեւմտեան սատրապութիւնն ուրեմն արդէն փոփոխութիւն կրած էր Արամեանեանց ատեն, եւ Չարմանալու չէ երբ նաեւ «փոքր» կը կոչուի յետոյ, եւ աղեքսանդրեան չըջանին «Հայք՝ զոր փոքրիկունս կոչեն» (հմմտ. օրինակի համար Կուրտ. Գ., Ժք) տարրեր չէին Արեւմտեան կոչուած փոքր սատրապութեանէն: Աղեքսանդր ընդհանրապէս չփոխեց սատրապութեանց չըջանները, եւ անոր համար երբ Միհրէն ի վարձ իւր մասնութեան Սարգեաց քաղաքը՝ կ'առնու «Հայաստանը» (Սոխան., Աղ. Գ., 16, 5. Կուրտ. Ե., ա). միայն Արեւմտեան կոչուած բաժնին էր: Հաւանօրէն տակաւին սատրապական բաժնին էր «Արգոստէս արքայ Հայոց», որ նաեւ Նէոպոտոմեայ փորձէն ետքը, օգտուելով Անտիոքոնեայ եւ Սելեւկոս Նիկատորի կռիւներէն, կ'օղնէ իրեն ապստամնող Արիա-

րաթայ եւ Գամբայ գահը կը հանէ (Հմմտ. Դիոտ. Հակո. Ա., 19, 5): Ինչպէս որ Արեւելեանին արքայն էր Որոնտէսը՝ Պիւկեստէսի բարեկամը, որուն բերնով Եւմենէս կը փորձէր նամակ գրել «Ասորոց գրով» (Հմմտ. Դիոտ. ԺԹ., 23, 3): Յետ ազեքսանդրեան խառնակութեանց շրջանին այս երկու կէտերը (316 եւ 301 տարիներուն) կը բացատրեն Հայաստանի վիճակը: Եւ երբ նաեւ հին հեղինակաց քով, որոնք հնագոյն աղբերց աւանդածն իրենց ժամանակի աշխարհագրական դրեց համեմատ կը բացատրեն, «Փոքր Հայք» ալ երեւան կու գայ, կամ ընդհակառակն ընդհանուր «Հայաստան» մը, «արքայ Հայոց» եւ նման բացատրութիւններ, պէտք է միշտ աչքի առջեւ ունենալ իրաց իսկական վիճակը, եւ դարձեալ այն աւատական դրութիւնը («նախարարութիւնը» են), որ կար արդէն Ուրարտեանց շրջանին, չզարգեցաւ Արամեանիներէն առնալ. եւ աւելի ծաղկեցաւ Սելեւկեանց շրջանին: Ազեքսանդրի պայագատաց երկար խոտվարից ժամանակներէն ետքը՝ Սելեւկեանց զերիշխանութեան ներքեւ ինկած էր նաեւ Հայաստան: Բայց այս զերիշխանութիւնն, արդէն յաճախ անուանական, արզելք չէր որ իւրաքանչիւր «սատրապ» ինք զինքն անկախ զգար: Սատրապական քիչ շատ մեծ տներ կանուխէն իսկ այս ճամբան բռնեցին եւ այսպէս կանգնեցաւ ո՛չ միայն Արիարաթեանց գահը՝ Գամբայ, Միհրդատեանց Պոնտոսը, Ատրպատէսի Ատրպատականը, այլ հետզհետէ նաեւ շատ աւելի մանր թագաւորութիւններ, ինչպէս Ալիարենէ, Կորդուք, Ուսայատան, Կոմագենէ, յիւմանակիցքը: Եւ ասոնք ալ զրամահատութեան իրաւունք կ'ունենան, որոնցմէ յատկապէս գամբայեանը եւ մանաւանդ պոնտականը յաճախ շատ զեղեցիկ կտորներ են: Սելեւկեանք չէին կրնար փոխել իրաց այս վիճակը, եւ յաճախ պատահած դժուարութեանց առջեւ կ'անուրին խնամութեամբ, ի հարկին նաեւ արշաւաններով, որոնց արզելքը կ'ըլլար իրենց միշտ դատարկ գանձուն մի քիչ լեցուիլը երբեմն փոփոխութիւն մը իշխանի մը, եւ սակայն յետոյ իրերը հիմնապէս նոյն կը մնային: Այլապէս չեն եղած Հայոց իրերն ալ, եւ այս շրջանին բաւական դրամներ կան նաեւ Հայ արքայից, թէեւ եւ ո՛չ հատ մը գանուած է բուն Որոնտեանց

տնէն, ո՛չ ալ յաջորդ Արտաշէանց բաժնէն մինչեւ Տիրգրան: Դրամները կը վերաբերին արեւմտեան Հայաստանի, յատկապէս Ծոփաց թագաւորութեան, եւ մաս մը՝ «Փոքր Հայոց», որոնք այս շրջանին կը սկսին կազմակերպուիլ, որչափ որ շարժելու տեղ թողուցած են Գամբայ եւ Պոնտոս եւ նաեւ մնացեալ Հայք: Դժբախտաբար նաեւ այս շրջանին յաճախ միայն հատակոտորներ կան հին մատենագիրներէ, այնպէս որ կան արքայք՝ որոնցմէ ունինք զԲարսիւսը, բայց որոնց մասին զբաւոր տեղեկութիւն մը չէ հասած: Սակայն հատակոտորոց եւ այլ յիշատակարանաց օգնութեամբ եւ զրամոց ալ ուսումնասիրութեամբ կարելի եղած է քիչ շատ լուսաբանել արեւմտեան հիւսիսային (Փոքր Հայք) եւ մանաւանդ արեւմտեան-հարաւային (Ծոփաց) բաժիններուն վիճակը (Հմմտ. Բարբլոն, Արքայք Ասորոց, Հայաստանի եւ Կոմագենեայ, Պարիս 1898. Բարբլոն եւ Ռայնախ, «Փոքուն Ասիայ դրամներ», Բոյթ եւ ուրիշներ): Որոշ է կէտ մը. այս շրջանին՝ իբր մինչեւ Բ. դարու (Ն. Ք.) սկիզբները՝ պէտք է զանազանել «ծոփական» աշխարհները՝ հիւսիսայիններէն (Բարձր Հայոց): Ծոփաց (ի հարկէ ընդարձակ մտօք) կենդրոնն էր Արշամաշատ (Աշմուշատ են) շինուած զոնէ այն Արշամ արքայէն, որ բարեկամ էր Անտիոքոս Հեոպի, որ իւր եղբոր՝ Սելեւկոսի՝ դէմ մղած կռիւներու առնալ ստիպուած էր Միջագետքէն ապաստանիլ «Հայոց լեռները»՝ իւր բարեկամին (Պոլիբիոս. Գ., 17, իբր 235ին Ն. Ք.): «Արքային Արշամայ» զրամները տպական նմանութիւն ունին ժամանակին գամբայեանց (Արիարամեան 280—230): Շատ կարելի է որ Արշամ մըն էր նաեւ անանուն յիշուած արքայն (իբր 260ին)՝ Անտիոքոս Սոլմոսի մահուան տարիէն (Հակո. Միմոնի): Արշամաշատի դրեց վրայ տեղեկութիւն կու տայ Պոլիբեայ Հատակոտորը (Բ., 25): Արշամաշատ «մօտ» էր «Ի Դաշտն կոչեցեալ Դեղեցիկ ընդ մէջ Եփրատայ եւ Տիրգրիսի», որուն արքայն էր «երիտասարդ» Շաւարշ (Քսերքսէս, իւր զրամները՝ «արքային Քսերքսէսի»), որուն հայրն արդէն զաղբեցուցած էր հարկ տալ: Անտիոքոս կ'արշաւէ բանակաւ, կը հասնի Արշամաշատ եւ կը պաշարէ: Շաւարշ նախ կը փախչի. բայց կասկածելով թէ երբ «արքունիքն» անուրի՝ կրնայ ամբողջ թագաւորութիւնը («այլ կողմանք արքայութեանն»)

ԱՐՏԱՋԻ ՎԱՆՔԸ

Վարդան Մամիկոնեանի անունովը ուսուցիչները նուիրականացած գաւառն է Արտաղ: «Այս գաւառ անկանի ի հարաւակողմն ի հարաւոյ արեւելից Մասսեաց, որպէս ցուցին րանք Խորենացոյն եւ մերձ ի Կողովրտ գաւառ Այրարատու ըստ որում դնէ թովմաս Մեծոփեցին (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 202): «Այժմեան Մակու գաւառը մասամբ մը կը համապատասխանէ հին Արտաղ գաւառին» (Բնաշխ. Բառարան, Ա., էջ 325): Արդէն Վարդան Աշխարհադեր կը գրէր՝ «Արտաղ Մակու է, ուր կայ սուրբ Առաքեալն Թադէոս» (Saint-Martin, Mémoires, II, էջ 422): Մակուի մէկ մասը կը համապատասխանէ Ակէ գաւառին:

1. Ս. ԹԱՂԵՒ ՎԱՆՔԸ

Ս. Թաղէի վանքը հիմնուած է Արտաղ գաւառի Մակուի խանութեան Ղարաքիլիսա հայաբնակ զիւղէն հարիւր քայլ հեռու (Մանատրուկ դաշտի արեւմտեան մասը կազմող լեռնամէջ տափարակի եւ ձորաբերան հարթութեան վրայ), Աւարայր դաշտի հիւսիսարեւմտեան կողմը<sup>1</sup> (Արարատ, 1898, էջ 38 եւ 356): — «Նստած է փոս տեղ, ձորի մէջ եւ երեք կողմերից բարձրանում են լեռները» (Մուրճ, Բ., 1903, էջ 123):

Վանքը բաղկացած է կրկնակի տաճարներէ, որոնց չորս կողմը կառուցուած են միաբաններու կացարաններ եւ ուրիշ հարկաւոր չէնքեր՝ շրջապատուած բուրգաւոր պարիսպներով:

Տաճարին այժմեան հին բաժինը վերաշինած է Չաքարիա եպիսկոպոսը 1329ին, ինչպէս հիւսիսային պատի վրայ՝ լուսամուտին տակ գտնուած արձանագրութիւնը կը ցուցնէ՝ «Այս տաճար լուսակիր եւ երկնանման առկայացեալ հաստատագոյն հիմամբը ի վերայ աստուածաբնակ շիրմի սուրբ Առաքելոյս Թադէոսի, որ ըստ բազմատեսակ յանցանաց մեր զկործանումն էստ ի շարժէ: Իսկ ես նուստ սպասուոր նմին Չաքարիա

<sup>1</sup> «Հեռի ի Պայեղիտ քաղաքէ իբրեւ 16 ժամու, բնակեալ ի միաբանից, եկեղեցի նորա քաղաքէն կոփածոց հանդերձ կաթուղիկէի: Թեմ մենաստանիս ձգի մինչեւ ի Սոյ, ի Չորս, ի Սայմատ եւ ի Գէլիլի» (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 251): — Վարդան Աշխարհադեր շատ ընդհանուր կը գծէ վանքիս գտնուած վայրը (Հմմտ. իր յառաջբերութիւնը՝ վերը):

Եպիսկոպոս որդի պարոն Մա(նուէլ)ին կառուութեամբն Աստուծոյ սկիզբն արարի կրկին (նորո)գութեան առաւելեալ քան գառաջինն ի ժամանակի սաստիկ նեղութեան եւ հալածանաց քրիստոնէից, որ բազում եկեղեցիք քակտին: Վասն որոյ արձանագրեցաք գյիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի մեծին Աստուծոյն եւ անարիւն զենմանն զառինն Աստուծոյն հանդերձ ճնօղօք եւ զարմիւք եւ զաջորդն մեր զոնէր Տիրացուն, այլ եւ զհարազատ եղբարս մեր զՊետրոս եւ զՄարգիս, որք ըստ կարութեան նպաստաւորք եղեն ընչիւք: Կատարումն թվին ՉՀԼին» (1329): Շահաթուկեան՝ Ստորագրութիւն կաթ. էջմիածնի եւ հինգ գաւառաց Արարատայ, էջմիածին 1842, էջ 350, Փրանդեան, Ատրպատական, Թիֆլիզ, էջ 28. Մուրճ, Բ., 1903, էջ 125. Արարատ, 1898, էջ 89):

Չաքարիա զայն շինել տուած է կապտագոյն քարերով՝ զանոնք բերել տարով Գարբուլադի քարահանքէն, որ կը գտնուի Գարայնի զիւղի մօտերը: Տաճարի այն բաժինը ունի խաչաձեւ կաթուղիկէ, երկու խորան, երկու սեղան, հինգ լուսամուտ. — զմբէթի վրայ ալ կայ չորս լուսամուտ: Գմբէթը անսիւն է եւ հաստատուած կամարներու վրայ: Սեղանի վրայ կը բարձրանայ քարաչէն, քանզակազարդ եւ զմբէթազարդ խաչկալը — դռներով եւ կամարներով (Արարատ, 1898, էջ 39): Խաչկալին<sup>2</sup> վրայ կայ այս արձանագրութիւնը՝ «Շնորհին Աստուծոյ եւ կարողութեամբ նորին կանգնեցաւ զեղեցկայարմար եւ զեղեցկափայլ խաչակալս ի յառաջնորդութեան ժամանակի Գէորդ վարդապետին. արդ որք հանդիպիք տուք զոյրմին, եղև կատար շինմամբ նորին ի մերս թուօջ ՌՄԽԻն» (1793, Արարատ, 1898, էջ 89): Սեղանին առջեւի մասը զարդարուած է խորաքանդակ սիրուն նկարներով եւ արձանագրութիւններով:

Սեղանին խաչկալի մուտքի դռները կը ներկայացնեն (կտաւի վրայ նկարուած) աջ կողմը Ս. Թաղէոս — երիտասարդ մը զեզարդը ձախ ձեռքին եւ զաշոյնը աջ ձեռքին մէջ — իսկ ձախ կողմը Ս. Բարթոլոմէոս — ալեւոր մը՝ ձեռքին մէջ Տիրամօր պատկերը: Ս. Թաղէոսի գրութիւնն է՝ «Յիշատակ է Սիմէօնի արքեպիսկոպոսի եւ յաջորդ», որ կը շարունակուի Ս. Բարթոլոմէոսի կողմը՝

<sup>2</sup> Խաչկալին քանդակները սքանչելի են (Արարատ, 1898, էջ 89):



նարկեր Աստուրնասիրպաղի վերայից ալ արձանագրութեան 39րդ տողը. «Այս բանակա-տեղիէն ճամբայ ելայ դէպի Նիժնի լեռան վերելք գտնուող քաղաքներն, որոնց տեղն ոչ ոք տեսած էր»: Միաժամանակ պէտք է միշտ աչքի առջև ունենալ որ Աստուրնասիր-պաղի ճամբայի վերջը համեմատութեամբ դասական անհնգութեան շատ աւելի անկա-տար է, ինչպէս Տիգրիսի ստորերկրայ ըն-թացքի մասին եղած նկարագրութեան կը տեսնուի<sup>253</sup>, եւ հետեւորար այն չափով միայն գնահատելու է: Այս չափանիշը կ'արժէ առաւելագոյն բարելական ջրհեղեղի զրոյցին համար, որ իւր պէտքէն խմբազու-թիւններով կարող չէ յատկապէս մեղի իրը վստահելի առաջնորդ մը ծառայել՝ տապա-նակեան աշխարհագրական գիրքն որոշելու համար, որովհետեւ իր գնահատան պատ-մուածքներուն մէջ կը փոխուին նաեւ անուն-ները: Եւ զարմանալի ալ չէ, վասն զի «քնա-զրի մը կանոնականացումը տեղի չէ ունե-ցած, ամէն բանաստեղծ (աւանդող) կրնար դայն փոփոխել»<sup>254</sup>: Նմանապէս հնարաւոր է որ Նիժնի լեռնայ «Բարեկարգուց եւ Աստուր-նասիրպաղի նոյն լեռնաշղթային տուած գործա-ծական անունը եւ այս պարագային կարելի է թէ սեմական բառ ըլլայ»՝ փրկութիւն, նշանակութեամբ՝ կա՛մ զիտմամբ ընտրուած՝

ջրհեղեղի պատմութիւնն ահնարկելու եւ կա՛մ հիմնուած լոկ ժողովրդական ստուգա-բանութեան վրայ. ըստ այսմ բառախաղը կ'ըլլայ պատճառ՝ ջրհեղեղին այս լեռան հետ կապուելուն»<sup>255</sup>:

Հին Բարեկարգութեան տապանակեան մասին ունեցած գաղափարը. ճանչնալու կողմէն մը կարծես կը մատակարարէ Գիւ-ղամէշ-գիւղացիներգութեան 11րդ երգին հա-մեմատութիւնն Գրգ երգին՝ այն տեղիքին հետ, ուր կը պատմուի թէ նաւը Նիժնի լե-ռան վրայ դադարելէն ետքն Ուտ-նապիշտիմ իւր կնոջ հետ ստուռածներն զատու մէջ կ'ստնուի եւ այս պատճառաւ ալ զրախտ՝ ստուռածներն ընտելուցին, որ «գետերու բերանը» կը գտնուի, փոխադրուելու կ'ար-ժանանայ.

«Էա նաւ մտաւ,  
Բոնեց ձեռքէս եւ հանեց ցամաք,  
Հանեց ցամաք եւ ծնրադրեցուց կինս իմ  
կողքիս,  
Ծօշափեց մեր ճակատը, մեր երկուքին միջեւ  
մտնելով օրհնեց զմեզ.

Յառաջագոյն Ուտ-նապիշտիմ լոկ մարդ էր,  
Արդ Ուտ-նապիշտիմ եւ իւր կինը մեզ առ-  
տուածներուս նման պէտք է ըլլան.  
Ուտ-նապիշտիմ պէտք է բնակի հետուն՝  
գետերուն բերանն,  
Աօրին զիս, հետուն՝ գետերուն բերանը տուին  
ինձ բնակարան»<sup>256</sup>:

Այս տեղիքին զուգակշիռ է Գրգ երգն,  
որ մեղի «գետերուն բերանն» ըսուած բա-  
ցատրութիւնը հասկանալի կը դարձնէ:  
Գրգի 18 տողի բացէն ետքը բնագիրը կը  
շարունակուի<sup>257</sup>.

«Լեռան անունն է Մաշու:  
Երբ Մաշու լեռն հասաւ,  
Որ ամէն օր կը պահպանեն [արեւու] ելքն  
[ու մուտքը],  
Անոնց վրայ է երկնաթումբը [...],  
Անոնց կուրծքը կը հասնի՝ սանդարամէտէն,  
վար,  
կարիք-մարդիկ կը պահպանեն անոր զուրը,

աշխարհագրական գետեզման համար, այլ մտնաւանդ  
թէ Ուտ-նապիշտիմ-Ուտ-նապիշտիմ կը յիշուի իրը սասմանա-  
կից հուսմանը (= Կուսման) երկրին, որ է Կապու-  
ղամէշ: Գրգի Մարդանասար Ա. ալ այս արշաւին  
ժամանակ կորած է ստորեռանեան այն պատերազմա-  
կան ճամբան, որուն վրային ոչ միայն իր յաջորդները  
մինչեւ Տիգրիսի փոփոխին (Բիբլիոն-սու) հասած  
էին, այլ նաեւ ինքը մինչեւ Մաշուի եւ թէ նոյն իսկ  
Կապուղամէշի ստորեռանեան գաղութը աշխարհա-  
կալ թողաւորիս «ժամանակէն է կամ անոր յաջոր-  
թիւնը մէկ հետեւանքը, հիմայ հաւանականութեան  
բարձրագոյն աստիճան մը կը ստանայ» (Lehmann-  
Haupt, Armenien, II, էջ 117): Ուտ-նապիշտիմ աշխար-  
հագրական գիրքի մասին գէթ թ. գարուն համար չի  
կրնար խնդիր ըլլալ Մարդանասար Գ. ի (860—826)  
արձանագրութիւնը Տիգրիսի փոփոխին մէջ գտնուե-  
լէն ետքը (տ. Lehmann-Haupt, անդ, I, 434 ղբ.),  
մտնաւանդ թէ արդէն սուր հայրն՝ Աստուրնասիր-  
պաղի Բ. բառ իր մէկ արձանագրութեան (տ. § 6,  
ձեռք. 188) այս կողմէն արձան է, եթէ սուր մէկ  
միջուած Մուրնատ տեղագրութիւնը Սիբիւն-տուն է, ինչ-  
պէս կը կարծուի ընդհանրապէս, զոր Lehmann-  
Haupt (անդ, I, 442) Միջագետքի Բարեկարգութեան  
գիրքին հետ կը նոյնացնէ:  
<sup>253</sup> Հմմտ. Lehmann-Haupt, չՄ. 1927, 799 ղբ.,  
որ յառաջ բերելով Պլինիոսի (N. H. VI, 127, 128)  
ճանաթ տեղիքը — քաղաքը հին արքիւրէի մը՝ հաւա-  
նաբար Հեկատոսոսի կը կրնայ թէ հոս նկարագրուած  
Տիգրիսի երկու անգամ ստորերկրայ ընթացք ընելն  
Վրանասիրպաղի անկի մաս է» (էջ 803), ինչպէս թէ  
Վանայ լիճը միայն մէկ անակ ձուկ ունի եւն. հմմտ.  
Նաեւ Տեղեկանքն Armenien, I, 460 ղբ.:  
<sup>254</sup> H. Winkler, անդ, էջ 88, ձեռք. 1:

<sup>255</sup> Streck, ZA 15 (1900), էջ 273 ղբ. = հայ.  
թարգմ., էջ 143:  
<sup>256</sup> Տախ. թՄ. տող 198—205. տես Ungnad-  
Grebmann, Gilgamesch-Epos, էջ 59, ձեռք. 1: Նա-  
խընարկի է «գետերուն ակնազարկը» բացատրու-  
ման մասին, տես վարք. ձեռք. 277:  
<sup>257</sup> Տախ. թ. տող 36 ղբ., տես Ungnad-Greb-  
mann, էջ 40 ղբ.:



1732-71

վտանգուել, հաշտութեան պատգամաւոր կը  
զրկէ, եւ Անտիոքոս չ'անսար իւր խորհրդա-  
տուաց, որոնք խորհուրդ կու տային դերի  
պահել Շաւարշը եւ թագաւորութիւնը տալ  
Միհրդատայ, որ իւր քրոջ բնական դաւակն  
էր. ուստի Անտիոքոս կը հաշտուի Շաւարշի  
հետ, կը թողու հարկաց մեծ մասը. եւ կը  
պահանջէ 300 տաղանդ եւ հազար ձի եւ նոյն-  
չափ ջորի (— նշանակալից է նաեւ «Արդի-  
սարայ արքայի» դրամներուն վրայ, որոնք  
արդէն մեծ նմանութիւն ունին Արշակունց  
դրամներուն հետ, Չիու գլուխ տիպը, նոյն-  
պէս՝ Արծիւ —) եւ վերջապէս Շաւարշի  
կնութեան տուաւ իւր Անտիոքիս քոյրը:  
Դիտմամբ պատմեցինք այս դէպքը՝ որ գա-  
ղափար մը կու տայ Հայոց այս բաժիններուն  
վիճակին վրայ: Դժբախտաբար Պողիւբեայ  
Թանկազին տեղեկութիւնը հատակոտոր է,  
եւ դիտնոց մէջ մեծ խնդիր է թէ ո՞ր Անտիո-  
քոսն է այս: Ծառերը կը համարին Մեծը  
(եւ անոր համար Շաւարշի դէպքը կը գնեն՝  
ըստ տեսութեանց՝ 215ին կամ 202ին Ն. Ք.)  
մինչդեռ Բարբլոն ընդարձակօրէն կը քննէ  
զժուարութիւնքն եւ կ'ընդունի միայն Ան-  
տիոքոս Գ. Եպիփան (175—164) կրնայ ըլ-  
լալ եւ անոր համար այլազգ կը մեկնէ նաեւ  
Յովհ. Անտիոքացոյ Հատակոտորին այն տե-  
ղեկութիւնը թէ Անտիոքոս (ըստ երեւութիւն  
Մեծ) ստիպուած էր միջամտել Արշակա-  
նապի գործոց, որուն Շաւարշ արքայն սպա-  
նուած էր Անտիոքիս կնոջմէն, որ Անտիո-  
քոսի քոյրն է: Թնդիրը կը դառնայ ուրեմն  
այս Անտիոքիսի անձին վրայ, եւ Բարբլոն  
այս արշաւանքը կը կապէ Անտիոքոս Եպի-  
փանի Կիլիկեան ապստամբաց դէմ մղած ար-  
շաւանքին հետ (171/170 Ն. Ք.) եւ նոյն Ան-  
տիոքոսն էր որ փորձեց Արեւելեան Հայոց  
Արտաշէսը խոնարհեցնել (Հտկա. Դիտա.  
Սիկ.): Կարելոր է խնդիրը՝ թէ՛ զբանները  
դասաւորելու եւ թէ՛ ճշգրտելու համար  
այլեւայլ արքայից շարքը եւ կապը (յիշեալ  
Միհրդատը՝ օրինակի համար՝ Ռայնախ եւ  
այլք նոյն կը գնեն Փոքր Հայոց Միհրդատին  
հետ, Բարբլոն՝ նոյն կը գնէ անոր հետ որ  
Գամբաց գահն ելաւ իրը Արիարաթ Ե.  
163—130 Ն. Ք.), եւ մանաւանդ լուսարա-  
նելու այն կէտը թէ ինչ աղերս ունէին Շա-  
ւարշ եւ Չարհէ՝ որ 190էն Ն. Ք. հիմ գրաւ  
Ծոփաց նոր թագաւորութեան եւ յամենայն  
զէպս հետզհետէ տիրեց ամբողջ ծոփական  
աշխարհաց եւ նաեւ հիւսիսային գաւառաց:

Մեր նպատակին համար կը բաւէ մտադիր  
ըլլալ թէ Արշակունցն էր կենդանոն արեւ-  
մտեան-հարաւային Հայոց, իւր դիրքը՝ մօտ  
«Գեղեցիկ դաշտին» (Պարբերդի շրջակայ)  
նոյնպէս մօտ Եփրատայ (Արաճանի), միով  
բանիւ արդի Պարբերդի եւ Բալուէի միջեւ եւ  
միւս կողմանէ Արշակունցը ոստանը Արշա-  
մունիք՝ ծոփական Հայտնից արեւելա-  
կողմը, ըստ Բուզանդայ (Գ. Ժե) տակաւին  
Տարօնոյ մէջ, կը ցուցնեն թէ այս թագա-  
ւորութեան տարածութիւնը՝ Եփրատէն մին-  
չեւ Տարօն քիչ շատ կը համապատասխանէ  
Արշակունց ժամանակի արեւմտեան սա-  
տրապուլեան՝ զոր տեսանք: Մէկ կողմանէ  
ուրեմն կը պարունակէր նաեւ Արաճանոյ  
հիւսիսակողմն եղած աշխարհաց շարք մը՝  
բաց ի Բարձր Հայոց գաւառներէն, միւս  
կողմանէ դէպ ի հարաւ արդէն գտնէ այս  
չըջանին սկսած եւ Չարհէանց օրով աւար-  
տած ըլլալու է «Ծոփաց» այն ընդարձա-  
կումը, զոր կը ներկայացնեն արեւմտեան  
Ծոփք՝ Եփրատի վրայ Մելիտենայ հանդէպ  
եւ արեւելեան «Մեծ Ծոփք», որ գտնէ յետոյ  
մինչեւ Մասիոս լեռանց մէջ կը ձգուէր, ուր  
էր Բնարեղ (Մարտինի մօտ): Դժբախտա-  
բար որոշ չեն ինչպէս երկու սատրապու-  
թեանց այս հարաւային սահմաններն, նոյն-  
պէս յետոյ ծոփական թագաւորութեանց այս  
հարաւ-արեւելեան սահմանները հնութեան  
ատեն (յետոյ՝ Նիմփիոս գետը), որ կապ ու-  
նենալու է Մեծ Ծոփաց եւ Աղձնեաց հին  
սահմաններու խնդրոյն հետ («Ծոփաց» գա-  
ղափարին զարգացման, եւ Ծոփաց եւ Աղձ-  
նեաց այս խնդրոց մասին տես նաեւ Հիւրշ-  
ման, անդ, 137—184. այս կողմանց «յա-  
րեւմտից հարաւոյ» բղջիխութեան եւ յա-  
րակցաց մասին նաեւ Մարիուարտ, «Հայ  
բղեաշխք»՝ որ այս Շաւարշներն ու Չարհէ-  
ները կը կապէ ապագայ Արժրուեանց հետ):  
Մինչեւ Եփրատայ արեւմտակողմը կար Ար-  
շակունցը երկիր մը, եւ Արշակունց մը (արդի  
Կերկեր, Վերանչէհեր): Ինչպէս ի Նիմ-  
բուտ-տաղ՝ նոյնպէս Կերկերի քարաժայռին  
վրայ քանդակած եւ արձանագրած է Անտիո-  
քոս Ա. Կոմագինեայ (69—34 Ն. Ք.) իւր  
պարձանօք յիշած «բարբառտիկ» շառա-  
ւիղն, «ի Պարսից» եւ «Հելենացոց» (Սե-  
լեկեանց) եւ նախնիքը: Եթէ զբամազեպք  
նոյն իսկ զբամոց նկարագրին Արշակունցը  
հետ կը կապէին «Շամէս (Սամէս) արքայ՝  
Աստուածասէր եւ Արդար», եւ իւր անունը կը

իշխեցընէր Կոմագինեան Շամուշատը (Շամ-  
շատ), Անտիոքոսի արձանագրութիւնքն՝  
մանաւանդ ի Կերկեր՝ տարակոյս չեն թողուր  
թէ այս Շամէս (Արշամէս) պապն էր Անտիո-  
քոսի, հայր Միհրդատայ Ա. Կալինիկոսի Կո-  
մագինեայ (96—70 Ն. Ք.): Եւ նոյնպէս իւր  
նախահարց շարքին մէջ, որ Դարեհէ կը  
սկսի եւ կ'անցնի Հայոց սատրապ Որոնտէս-  
ներու («Արուանդէս» սատրապ եւ յաջորդ  
«Արուանդէս» արքայ՝ կը ցուցնեն Արամի-  
նեան-Սելեւկեան շրջանը) եւ (թէ եւ եղծեալ  
ըլլալով արձանագրութիւնք՝ մնացեալը ա-  
նորոջ կը մնան) կ'աւարտի՝ Շամէս եւ  
Միհրդատ (Կալինիկոս) արքայներով (Բան-  
տակաց արեւմտեան շարքը): Միւս (արեւե-  
լեան) շարքը աւելի թերի է այժմ, բայց  
«Արուանտէս» սատրապէն ետքը՝ երկու ա-  
նուն անորոջ մնալով՝ կը յաջորդեն երկու  
Արշամ, ապա՝ անուն մ'անյայտ, եւ զար-  
ձեալ նոյն Շամէս, իւր կինը, Միհրդատ  
(Կալինիկոս) եւ իւր կինը: Կերկերի արձա-  
նագրութիւնք կը ցուցնեն թէ այս Արշամիւս  
էր գլխաւոր նիստ Արշամներու այս ճիւղին  
եւ նաեւ դամբարան արքայից: Թողունք այն  
խնդիրը թէ այս Արշամներէն ո՛րը նոյն է ար-  
դեօք Արշամաշատի Արշամներուն հետ, եւ  
թէ ե՞րբ այս ճիւղն տիրող եղաւ Կոմագինեայ  
թագաւորութեան: Վերջինս՝ իւր ամբողջու-  
թեամբ՝ կրնար ըլլալ միայն այն փորձէն  
ետքը, զոր կատարեց (ըստ Գիտոս. Հակոս.  
I Ա., 19) Կոմագինեայ սատրապը Նէոպոլոս-  
մէոս, որ անկախ հռչակեց ինք զինքը, եւ  
փորձեց մինչեւ անգամ սոնուս Մելիտինէն  
Գամբաց ձեռքէն (164—2ին Ն. Ք.) բայց  
չյաջողեցաւ: Բուն Կոմագինէ սելեւկեան էր  
եւ ըստ երեւութիւն իրր օժիտ սելեւկեան  
իշխանուհեաց անցաւ Անտիոքոսի նախա-  
հարց ձեռքը: Թէ իրերն ինչպէս էին այս  
արքունեաց մէջ՝ բացայայտ կը ցուցնէ Ան-  
տիոքոս իւր իսկ անձին քանդակով՝ իրրեւ  
յաջորդ մը Տիգրանայ, որուն ներքեւ էր ժա-  
մանակ մը, Տիգրանեան խոյրով, եւ տարա-  
զով մը՝ որ նոյն կամ շատ նման է Որոն-  
տէսներու արձանաց տարազին, եւ որ՝ իւր  
այն ձեւին մէջ՝ հին հայկական էր, այնպէս  
որ այս քանդակներէն կրնանք իմանալ  
Նրուանդեանց եւ Տիգրանեանց տարազի  
ձեւը: Նոյն է գիցարանութիւնը՝ միայն հոս-  
մէական համազօրք արեւելցած են, ուստի  
Չեւս-Արամապը, Ապոզոն-Միհր-Հեղիոս,  
Արտագնէս (Վահագն)-Հերակղէս-Արէս եւն:

Կերկերի արձանագրութեան «Թէս Արդան-  
դենէ» անշուշտ կապ ունի Արկնիի (Արդա-  
նա) հետ. բայց թէ ինչ կապ կար Արշամիայի  
ճիւղին եւ ասոր կամ աւելի եւս Անդեղ տան  
ճիւղին հետ, որոջ չենք զիտեր: Յամենայն  
դէպս Անդեղ (այժմ՝ Էկիլ, Արդանայ-դեալի  
վրայ) հին արքայանիստ վայր եւ դամբարան  
մըն էր, նոյնպէս ծանօթ նաեւ յետոյ (հմմտ.  
Բուդ. Գ., իդ, երբ Շապուհ եւ Մերուսան՝  
Տիգրանակերտէ ետքը Ծովք կ'արշաւեն,  
«զային պահ արկանէին շուրջ զԱնդեղ զա-  
մուր բերդաւն, որ է յԱնդեղ-տանն դաւա-  
սին, զի անդ էին բազում Հայոց թագաւո-  
րացն գերեզմանք շիրմանցն արանց արշա-  
կունեաց, բազում գանձք մթերեալ մնացեալ  
կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց  
հետէ»): «Գանձք» էին նաեւ Բնարեղ բերդին  
մէջ Մեծ Ծովաց, բայց չիրիմք չկան, մինչ-  
դեռ — եւ ասի կարեւոր կէտ է — հիւսի-  
սային բաժնին՝ Բարձր Հայոց եւ Փոքր  
Հայոց՝ պատմութեան համար, նոյնպէս հին  
արքայանիստ եւ դամբարան էր Անի, նոյն-  
պէս մնացած նաեւ ուշ ստեն (հմմտ. Բուդ.,  
անդ, Շապուհ եւ Մերուսանայ ձեռքը կ'իջնայ  
«ամուր բերդն Անի ի Դարանադեաց դաւա-  
սին... իջուցանէին անթիւ գանձս ի բերդէն  
եւ բանային զգերեզմանս գառաջին քագաւո-  
րացն Հայոց զարանց քաջաց զարշակունի,  
եւ խողացուցանէին ի վերութեան զորկերս  
թագաւորացն» եւն. միայն Սանատրիոյ «ան-  
հետեղ սկայագործ հաստաշինած ճարտարա-  
գործ» շիրիմը զերծ կը մնար. հոս կը թա-  
ղուէր տակաւին նաեւ Խոսրով՝ «սո իւր  
նախնին»՝ անդ, Գ., ժա): — Սակայն այս  
կողմանց վրայ ակնարկ մը ձգելէն յառաջ  
տեսնենք Չարեհի եւ Արտաշիսի Հայաս-  
տանը՝ կամ Բ. դարուն (Ն. Ք.) «Հին  
Հայաստանը»:

(Շարունակելի):

Անոնց անագնութիւնը զարհուրելի, անոնց  
տեսքը մահ է.  
Անոնց սարսափելի անարկու փայլը լեռներ  
կը տապալէ,  
Արեւու ելքին ու մուտքին կը պահպանեն  
արեւը:  
Տեսաւ զանոնք Գիլգամէշ՝ աս  
Ու սարսափ մթազնեցին անոր երեսը:  
Ամբողջ ուժը ժողովեց եւ անոնց առջեւ խո-  
նարհեցաւ:  
Կարիճ-մարդը զոչեց իր կնոջ.  
Մին որ մեղի կու դայ, որուն մարմինը աս-  
տուածներու մարմնէն է,  
Կարիճ-մարդուն պատասխանեց իր կինը.  
Մնոր երկերորդականն աստուած է, մէկ  
երրորդականը մարդ է»:

Մաշու լեռը, զոր կարիճ-մարդիկ կը  
պահպանեն, կը կազմէ սահմանագրութիւն աս-  
տէնական եւ անդէսական աշխարհի միջեւ եւ  
միաժամանակ արեւադուռն է, ուսկից ամէն  
օր արեւը կը ծագի ու մար կը մտնէ: Այս  
դունէն կ'ուզէ անցնիլ Գիլգամէշ հասնելու  
իր հօրը կամ նախահօրն՝ Ուտ-Նապիշտի-  
մին, «որ անկէ մտաւ [աստուածներու] դա-  
սուն մէջ [եւ կեանքը դիտեց]»: Կարիճ-  
մարդը կը յայտարարէ թէ այս անհարին է,  
վասն զի «լերան մէջ ոչ ոք ճամբայ դտած է»  
եւ ասոր պատճառն ալ է.

«Տասներկու կրկնաժամ կը տեւէ ներքնա-  
կողմն [լերան (?)],  
Անթափանցելի է խաւարը, չկայ [ոչ մի  
լոյս]»:

Ի վերջոյ թոյլ կու տայ Գիլգամէշին որ  
երթայ «Մաշուի լեռները», «լեռները, բար-  
ձունքները», «ողջաւորջ կարենայ աշխարհ-  
ներու դունէն» անցնիլ (տող 69—77, 120—  
126): Կարիճ-մարդուն այս թոյլտուութեան  
վրայ Գիլգամէշ ճամբայ կ'ելլէ «արեւու ճամ-  
բան» քալելու.

«Կրկնաժամ մը [հասաւ...].  
Անթափանցելի էր խաւարը [չկար ոչ մի  
լոյս],  
Թոյլ չեն տար իրեն իր... տեսնելու ինչ որ  
եսուր [կը գտնուէ]»:

Եւ այսպէս յառաջ կ'երթայ առաջին ինն  
կրկնաժամերը (տախ. Թ. տող 130—157):  
Երբ «տաս կրկնաժամեր կը կարէ»,  
[Էլքը] մտա է (տող 158 յջ.) եւ տասներկու

կրկնաժամերուն «կը լուանայ»: Կը հասնի  
«աստուածներու պարտէզը (?), երբ զայն կը  
տեսնէ, դէպի հոն կ'ուղղուի»:  
Աստուածներու պարտէզին շրջուցիչ  
փառաւորութիւնը կը ճանչցուի իր պտուղ-  
ներէն, որոնք հոս մասնաւոր կերպով կը յի-  
շուին, թէ եւ ասոնց թուումը կատարեալ ըլ-  
լալ չի թուիր 15 տողի բացին հետեւանքով:  
Իսկ ասոնց «յորդութիւնն (?) ու առատու-  
թիւնը» պատկերացնելու համար կը համե-  
մատուին «յուզդի (?) մայրի մը» կամ «ծո-  
վասէդի (?)» հետ կամ կ'ըսուի թէ «փուշ ու  
տատասկի նման առատ (?) է... քարը»  
(տող 164—167, 183—186):

Գիլգամէշ աստուածներու պարտէզէն  
անցնելէն ետքը, կը շարունակէ դիւցազներ-  
գութիւնը (տախ. Ժ), ծովի մը կը հանդիպի,  
որուն եղերքը Սիդուրի-Սարիթու աստուա-  
ծուհին կը դահակալէ: Դիւցազն երկար ճա-  
նապարհորդութենէն վայրագ տեսք մը կը  
ստանայ. այդ կերպարանքին տակ աստուա-  
ծուհին այս տարօրինակ մարդն, որուն եր-  
կու երրորդն աստուածային է, չի կրնար  
ճանչնալ, անկէ իրրեւ չար դեւէ մը կը զար-  
հուրի եւ անցքը կը փակէ: Սակայն սպառ-  
նալիքով կրնայ մուտք կամ գէթ իր հարցու-  
մին պատասխան ստանալ: Կը պատմէ աս-  
տուածուհուն յուզիչ խօսքերով իր ճակա-  
տագիրը.

«Երիտասարդ բարեկամս, դաշտին յովազը,  
էնդիդու, երիտասարդ բարեկամս, դաշտին  
յովազը,  
Որ ամէն բան... այնպէս որ լեռը բարձրա-  
ցանք,  
Երկնային ցուլը բոնեցինք եւ ապա սպաննե-  
ցինք,  
Խուճբարա<sup>258</sup> ընկճեցինք, որ մայրիներու  
անտառին մէջ կը բնակէր

<sup>258</sup> Այս Խուճբարա կամ հիւսիս. խմբագրութեան  
համաձայն Խուճբարա հրէշ-դեւին հետ երկու դիւցազն  
բարեկամներուն — Գիլգամէշի եւ Էնդիդուի — ունե-  
ցած կռիւր կը ներկայացնէ Բեբլոնի Թանգ. Յառաջա-  
կողմեան — տախ. բաժնին (VA 7246 — լայն.  
13'8 հմ., բարձր. 8'1 հմ., ամէնէն հաստ մասը 1'8 հմ.,  
գտնուած տեղն անյայտ) կաւ բարձրաքանդակ մը  
(Terrakotta-Relief), զոր Diétr. Opitz, Der Tod des  
Humbaba վերնագրին ներքեւ կը հրատարակէ AfO V  
(1928—1929), էջ 207—213. այսպէս կը հասկնայ նաեւ  
Thureau-Dangin (տախ. Rev. d'Assyriologie, XXII,  
էջ 24 յջ.), թէ եւ S. Smith, որ նման կաւ բարձրա-  
քանդակներ հրատարակած է (տախ. Annals of Ar-  
chaeol. and Anthropol. Univ. of Liverpool, 11 (1924),  
էջ 107 յջ.), չի միտիլ հոս դիւցազններուն եւ հրէշ-  
դեւին միջեւ եղած կռիւր տեսնել (տախ. JRAS, 1926,  
էջ 440 յջ.): Թէ ընդհանրապէս Գիլգամէշ-դիւցազն-